ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

«28» 12 2021թ.

ՀՐԱՄԱՆ N 668-Հ

«ՖԼԱՅՈՒԱՆ ԱՐՄԵՆԻԱ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ 29-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ «Զ» ԿԵՏՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՐՏՈՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով 1997 թվականի դեկտեմբերի 27-ի «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «զ» կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1936-Ն որոշման հավելվածով, հիմք ընդունելով Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի պարտականությունները կատարողի 2021 թվականի դեկտեմբերի 2-ի N 619-Ա հրամանով տրամադրված N 05 հավաստագիրը և N 05 հավաստագրի հավելվածը և «Ֆլայուան Արմենիա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2021 թվականի դեկտեմբերի 24-ի և դեկտեմբերի 27-ի գրությունները.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Նկատի ունենալով, որ «Ֆլայուան Արմենիա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) օդային տրանսպորտի միջազգային ասոցիացիայի (ԻԱՏԱ) ձմեռային ժամանակահատվածից սկսած՝ 2021 թվականի դեկտեմբերի 28-ից՝ շաբաթական 2 (երկու) չվերթ հաճախականությամբ Երևան/UDYZ/-Թել Ավիվ/LLBG/ և 2021 թվականի դեկտեմբերի 29-ից՝ շաբաթական 2 (երկու) չվերթ հաճախականությամբ Երևան/UDYZ/-Լիոն/LFLL/ երթուղիներով Հայաստանի Հանրապետության տարածք, տարածքի ներսում և

տարածքից դուրս կանոնավոր առևտրային օդային հաղորդակցությունների իրականացմամբ բավարարում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1936-Ն որոշման հավելվածով նախատեսված պայմաններին, չսպասարկված ուղղությունների և չվերթների հաճախականությունների պահանջներին, սույն կետում նշված երթուղիներով մեկնող ուղևորներին տրամադրվող «Պետական տուրքի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «զ» ենթակետով սահմանված արտոնության սկիզբ սահմանել 2021 թվականի դեկտեմբերի 28-ը՝ 36 ամիս ժամկետով Երևան/UDYZ/-Թել Ավիվ/LLBG/ և 2021 թվականի դեկտեմբերի 29-ը՝ 36 ամիս ժամկետով Երևան/UDYZ/-Լիոն/LFLL/ ուղղությունների համար:

2. Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի օգնականին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանի տեղադրումը Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի կայքում:

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ

ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

12/28/2021

X

ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Подписано: KHACHATRYAN MIHRAN 3308540266